զարդի հետ։ Ապա ուրիշ զարդերի հետ լուսանցքում կան բոլորակներ՝ կանթերով և օղակներով, որոնցից մէկի մէջ կարդացւում է 49բ. «պարոն վախ...», մնացածը եղծուած. 88բ. պա(ր)ոն վաղթ(ան)գ (որդի Ումե)կայ(*), և 120ա., որ ամենևին չի կարդացւում։ Զարդերը եւ մանեկաւոր թռչունները սասանեան աւանդների և արևելեան Հայաստանի հին արուեստի դրոշմ են կրում։

Բայց ամենից կարևորը Վախտանգի մանրանկարն է, 106ա. 12,8 × 4սմ. մեծութեամբ (պատկ. 1 եւ 7)(**), որի մասին յիշատակեցինք վերեւ, պատմական-աղգագրական նշանակութեամբ։ Պատանի անմորուք Վախտանգը նստած է բարձր պատուանդանով և բարձրաթիկունք աթոռի վերայ. աջ ծնկան դրել է կազմած, բաց աւետարան, Ղուկասի սկզբնաւորութեամբ. «քա|նզ|իբ|ում|ք յ|աւժ». թերթերի եզրները ոսկեզօծ։ Իշխանը հագել է մանիշակագոյն, գեղեցիկ ծալքաւորուած, երկար, բիւզանդական տունիկայ, որ հասնում է մինչև ոլոքները. օձիքը, կուրծքը եւ ներքևի քղանցքները ոլորապատոյտ, պարզ արմաւենիկի ոսկի զարդով. մէջքը սեղմուած ոսկի քամարով. թևերը բազուկների մօտ սեղմած՝ ոսկեզարդ թեղանիքով. արմունկներից վեր մի մի ժապաւէնաձև կապ թևին, սև ֆոնի վերայ եռանկիւնաձև, զիկ զակ ոսկեզարդով, որ իշխանական նշանն էր։ Զարդարուն են եւ ծնկները։ Գլխին դրել է՝ գագաթը քիչ բարձր եւ սրածայր՝ գլխարկ, բացուածքի շուրջը և արտաքին կողմը ոսկեճամուկ, յետևի կողմից սեւ ու ոսկեգոյն ժապաւէններ կախուած. գլխարկի կողքից մի մասը փչացած է պատկերի մէջ։ Կոշիկները սև են, սրածայր եւ առանց կրունկի. գարշապարի մօտից, կողքերից, զոյգ սպիտակ գծերի մի զարդ բարձրանում է մինչև ճիտկերի ծայրը, նոյն գծերով որոշուած են և ոտքերի թաթերը՝ ոլոքի մօտ երեսի կողմից։ Դէմքը նուրբ է, առանց մորուքի եւ ընչացքի, քիչ դէպի աջ թեքուած, գեղեցիկ և փոքր բերանով, սրածայր քթով, աչքերը խաղաղ և խոշոր, ունքերը բարակ և կամարաձև, ականջներից օղեր կախուած, այտերի կեդրոնն թեթև կարմրութեամբ. ընդհանուրը լուրջ և տխուր արտայայտու-



Պատկեր 7

(*) Փակագծի մէջ դրուածները մենք ենք լրացնում մնացորդներից դատելով։

(**) Պատկեր եօթը լուսանկարուած է Ա. Խիկեանի ձեռքով գունազարդ, մեծացրած օրինակից, որ պատրաստել ենք մեր մանրանկարչութեան աշխատանքի համար։